



ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՒՆՇԻԱՐԴ




Քիմիանյ Բ. Չարուբյուկյան
Քարտեզագիր Վ. Մխիթարյան

*Ժողովածուն պատգրվում է ամերիկահայ բարերարներ
Էդվարդ և Վերժին Մարրյանների (Սան Ֆրանցիսկո)
հովանավորությամբ*

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՉՈՐԻ ՃԱԿԱՏԱՍԱՐՏԻ 4500-ԱՄՅԱԿԻՆ




NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY



HAYKAZUNS

YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՍԻԱ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՍ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

Տպագրվում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի որոշմամբ

«Հայկազունիներ. առասպել և պատմություն»
 միջազգային գիտաժողովի կազմակերպիչ

Վ.Բ. Բարխուդարյան (նախագահ), Յու. Ս. Սուվարյան,
 Բ.Հ. Հարությունյան, Ա.Ա. Մելքոնյան, Պ.Ա. Ավետիսյան, Ա.Վ. Քոսյան,
 Ա.Ի. Շահնազարյան, Հ.Ղ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար)

Գլխավոր խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բարխուդարյան
 խմբագիրներ՝ պ.գ.թ. Հ. Հակոբյան, պ.գ.դ. Ա. Քոսյան,
 պ.գ.թ. Ռ. Ղազարյան, Ա. Շահնազարյան:

Հ 252 Հայկազունիներ. — Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 568 էջ+18 էջ
 նկ., 7 քարտեզ:

Հայկազունիներ. առասպել և պատմություն խորագրով միջազգային գիտա-
 ժողովի (2012թ. հունիսի 5-6, Երևան, ՀՀ ԳԱԱ) հողվածների ժողովածուն ներկա-
 յացնում է խնդրի ուղղությամբ կատարված հետազոտությունների արդի վիճակը:
 Գրքում ներառված է նաև մինչև գիտաժողովը վերջին շուրջ 2 դարերի ընթացքում
 թեմայի վերաբերյալ հայ և օտար հեղինակների աշխատությունների ընտրանին:

Նախատեսված է հայագետների և հայագիտությամբ զբաղվող լայն շրջան-
 ների համար:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	7
ՀԱՅԿԱԶՈՒՆԵՆԵՐ. ԱՌԱՍՊԵԼ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ	
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ. Բացման խոսք	10
ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ. Ներածական խոսք	10
ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ. Ողջույնի խոսք	12
ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Հայկի և Բելի պատմության, Հայ ժողովրդի կազմավորման, Ի>Յ հնչյունափոխության և մի քանի այլ Հարցերի շուրջ	13
ՀԱՅԿ ՀԱԿՈՒԹՅԱՆ. Տիգրան Մեծը և Հայկազունները համաձայն Խորենացու և Սեբեոսի	17
ԱՐԱՄ ԲՈՍՅԱՆ. Վանից մինչև Եփրատ (Հայոց պետականության ակունքներում)	48
ԵՐՎԱՆԻ ԳՐԵԿՅԱՆ. Վանի թագավորության անկման խնդրի շուրջ	64
ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ. Միտանի թագավորությունը և Հայկազունի նահապետների ու արքաների ցանկը	83
ԱՐՄԵՆ ԲՈՐՈՒՅԱՆ. Հարբը բրոնզի և երկաթի դարաշրջանում. առասպել, պատմություն, հնագիտություն	91
ՀԱԿՈՒ ՄԻՄՆՅԱՆ. «Հայկ և Բել» առասպել, ա՞ք, թե՞ իրապատում	97
ՕՆԻԿ ԽՆԿԻԿՅԱՆ. Հայոց ցեղասերության հարցի շուրջ	107
ՌՈՒՐԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ. Տուրուբերանում Հայաստանի տեղորոշման հարցի շուրջ	113
ՀԱՍՄԻԿ ՀՄԱՅԱԿՅԱՆ. Հայկական Տուրուբերան տեղանունը խեթա-հայկական փոխան- չությունների համատեքստում	118
ՎԱԼԵՐԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ. Հայկ նահապետը՝ որպես պատմական անձ	123
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ. Հին Հայաստանի տարածքը Ք.ա. VI-IV դարերում՝ ըստ Մովսես Խորենացու	129
ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ. Հայկազունը ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»	138
ՄԻՄՆ ՀՄԱՅԱԿՅԱՆ. Տոտեմ և Ֆետիշ երևույթը և Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» գիրքը	144
ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ. Գեղամի, Միսակի և Վեղուրի-Էթիունի ցեղախմբի պաշտամունքի մասին	148
ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ. Հայկ նահապետի կերպարը. Հնդեվրոպական և հինարևելյան առնչություններ	153
ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ. Հայկազունիների հարստության վերականգնումը Ուրարտուում մ.թ.ա. 585 թ. և նրա հիմնադիր Արմենիոս թագավորը	161
ԼԵՎՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ. Հայկական լեռնաշխարհի բնակեցման գենետիկական պատ- մությունը	176
ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ. Հայկական լեռնաշխարհում բիացիների եւ խորենացիական հայկեանների տարածման ուղիների համադրության փորձ	181
ԷԴՎԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ. Հայկյան խորհրդապաշտությունը Հայոց պատմության խորենա- ցիական իմաստավորումը	206
ԳՈՀԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ. Հայկազունները և Նավասարդյան տոները	212
ԿԱՐԵՆ ԹՈՒՆԱԹՅԱՆ. Հայկյան օրացույցի ակունքներում	222
ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ. Հնդեվրոպական ծագման Հայերեն արմատի տարբերակյին վերականգնման խնդիրները	235
ՄԵԼԱԴԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ. Հայ-Ուրարտական սուզաբանական դիտարկումներ	241
ՀԱՅԿԱԶՈՒՆԵՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՄԱՍՄԻԼՈՒՄ... Միջազգային գիտաժողով՝ Հայկազուններ. առասպել և պատմություն. ԳԱՅԱՆԵ ԲԱԴԱԼ- ՅԱՆ	246
Հայկազուններ. առասպել և պատմություն (վերլուծական անդրադարձ գիտաժողովի զեկու- ցումներին ՀԱՅԿ ՀԱԿՈՒԹՅԱՆ	249

ՀԱՅԿԱԶՈՒԽԵՆԵՐԻ ՀԻՄՆԱԽԵՆԴՐԻՆ ԵՎԻՐՎԱԾ Ե ԱԽԿԻՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՄԸ ԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ. Հայկայ շրջան. Տօմար եւ Թուական հին Հայոց. Հայադիր 255
 Տոնք Նավասարդի 265
 Դիցազունք 270
 Հայկն 273
 ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՉՏՅԱՆ. Հայրենյաց վեպք և զրույցք 275

ՀԱՅԿԱԶՈՒԽԵՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԶՐՈՒԾՆԵՐՈՒՄ
 ա. ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՉՏՅԱՆ. «Գրոց և բրոց» 281
 բ. ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ. «Վասպուրական. Հավատք» 282
 НИКИТА ЭМИН. Династический список Хайкидов в Истории Армении Моисея Хоренского и хронологическая их таблица у о.Михаила Чамчяна 286
 ՀԱԿՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆ. [Արմենների հնագույն թագավորությունը] 301
 ROBERT H. HEWSON. The Primary History of Armenia 304
 ОГАНЕС КАРАГЕЗЯН. Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам 312
 ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆ. Հայ ժողովրդի առաջացման պատմական միջավայրը 327
 ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ. Մոսկես խորհնացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները 334
 ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆ. Մոսկես խորհնացու «Հայոց պատմության» Առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները 351
 ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ. Հայերի ծագման զրույցի արարական տարբերակը 362
 Հ. ՅԱԿՈՎԼՐՈՍ Վ. ՏԱՇՅԱՆ. Թէ ինչպե՞ս կազմուեցաւ Հայ ազգը 368
 ԵՎԱՐԴ ԲՈԶԱՐ. Արմենոիդ ռասայական տիպի ծագումնաբանական խնդիրները Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում 370
 ՎԱՀԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ. Առասպելական պատմություններ և պատմական առասպելներ 377
 ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ. Իշուա երկիրը և Հիքսոսները (ըստ սեպագիր և այլ աղբյուրների) 382
 ГРИГОР КАПАНИЦЯН. Хайаса-калыбель армян. Заключение 384
 АКОП МАНАНДЯН. Сведения о стране Хаяса в древнеармянском устном предании.. ՆՇԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ խորհրդի շրջանները` Հայոց հնագույն օրրանը 394
 ГРИГОР КАПАНИЦЯН. Армянский Ара и славянский Яр (Ярило) 401
 ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ. Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում 413
 Հ. ԱՂԵՔՍԱՆԴԻՐ ՄԱՏԻԿՅԱՆ. Արայ Գեղեցիկ յոյն մատենագրութեան մէջ 418
 ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ. «Արա և Շամիրամ» առասպելի մի արձագանքը արաբ պատմիչ Մասուդու մոտ 426
 ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ. Տարկուն հին Հայերի մոտ 433
 ВЯЧЕСЛАВ ВС. ИВАНОВ. Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной Структуры текста гимна Ва(х)агну 438
 ԳԵՎՈՐԳ ԶԱՆՈՅԱՆ. «Բարելոնի Ակիտու տոնահանդես» սեպագիր արձանագրությունը ... 445
 ԳԵՎՈՐԳ ՏԻՐԱՅՅԱՆ. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. - մ.թ.ա III դ. վերջը) ԿԻՐԻՆ ԹՈՒՄԱՆՈՎ. Հայաստանի Որոնդյանները 461
 ՄԱՔՍԻՄ ԿԱՏՎԱԼՅԱՆ. Հայաստանը Համատարր, ամբողջական և առանձին երկիր 463
 ԵՐՎԱՆԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ. Կոմմագենի Երվանդունիները 483
 ԺԱՍՄԵՆ ԷԼՁԻԲԵԿՅԱՆ. Երվանդունիների ծագման հարցի շուրջը 497
 ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ. Օտար պատմագիրներից հիշատակված Հայաստանի ամենավաղ արքան 502
 ԱԼԲԵՐՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ. Արտաշես I-ի բարենորոգումները. ներհանրութային Հոմոստասիսի հաստատումը Հայոց միջավայրում 514
 ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ. Արտաշես I-ի արամեատառ հայերեն արձանագրությունները (նախնական հաղորդում) 517
 ԿՈՒՐՏ ԷՔՂԱՐԴ. Տիգրանի աշխարհակալութիւններն ու Տիգրանակերտի հիմնարկութիւնը 526
 ՀԱԿՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆ Հայ ճարտարապետության ակունքներում. Երվանդունիների շրջան.. ՄՈՒՐԱԴ ՕՂԱՆՅԱՆ. Առաջավոր Ասիան և Հայաստանը Մակեդոնացուց հետո 539
 ԶՈՐԶ ԲԱՅՐՈՆ Հայաստանի, հայերի և հայոց լեզվի մասին 541
 549
 562
 566

Ազժի՛ ես կանչեմ թխալիքս մեր ռազմական, ռևուսիոնար թուզալիքսիս: Մշտապես մեր թուզալիքսի մեզ ինչ այս ռազմիկ ես սիրելի, իբրև բնիկներ, սրբունակիքներ ես իմանալս հարապարտելու:

Ես շար կիսախաղի, որ այն ժամանակ Փրկիչն եկած ես ինչ զես ինչ, որ կրակայ ժամանակ ես աշխարհ եկած ինչի, կրակայ ցտրոթոթոթ կիսախաղի ես աշխարհ վրանդներից խուսափում ինչի...
 ...Մուսի՛ ես սիրում եմ շար թուզալիքս սրբալի կոչել - Հայի, Արամ, Տիգրան, որսիկներս թուզիքս սերունդներս թուզիքս ես...
 Մոսկես Մոսկես

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Դեռևս վաղմիջնադարյան Հայ պատմագիտական գործերում առանձնակի շեշտադրված, իսկ դասական Հայագիտության կողմից բազում խնդիրներով հանդերձ, հատուկ ուշադրության արժանացած Հայկազունիների հարստության թեմայի ուսումնասիրության հարցում յուրահատուկ ուղենիշ դարձավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի հոփանու ներքո 2012թ. հրավիրված «Հայկազունիներ. առասպել և պատմություն» առաջին միջազգային գիտաժողովը:

Հայկազունիների ֆենոմենի բազմակողմանի քննությունը սկսվել է տակավին 19-րդ դարի երկրորդ կեսին՝ արդյունավետ շարունակվելով 20-րդ դարի երկրորդ կեսին և հայ մի մեծ խումբ ակադեմիկոս Հայագետների և արևելագետների արժեքավոր գործերում: Մեզ նախորդած երկու դարերի գիտնականները, այդ թվում՝ մեր ժամանակակից ավագ սերնդի հայագետները, անդրադարձել են գրավոր աղբյուրներից հայտնի անձանց և նրանց սխրանքներին, փորձել հնարավորինս տեղայնացնել առավել պատմական դիտված Հայոց նախնիներին ժամանակի և աշխարհագրական ատաղձի որոշակի հանգրվաններում, ապա և տարադատել պատմական նյութի մեջ առկա առասպելն ու իրողությունը: Սա կատարվել է ժամանակի մեթոդաբանությունում, առկա բոլոր հնարավոր, նաև համեմատական, նյութի հիման վրա: Գիտական մոտեցումները և նրանց շնորհիվ ստացված արդյունքները ժամանակ առ ժամանակ ուղղորդվել են առկա գաղափարախոսության լծակների կողմից: Խնդիրների մի մեծ ծավալ սրա հետևանքով մնացել է ուսումնասիրության կարոտ, փոխանցվել առավել հանգամանալի քննություն՝ դեպի մեր օրերը, իսկ առանձին լուծումներ յուրահատուկ բանալի են հաջորդ սերունդների անելիքն այս հիմնախնդրի տարբեր ասպարեզներում ավելի նպաստավոր կետից շարունակելու համար:

Հաշվի առնելով Հայագիտության զգալի նվաճումները Հայկազունիների խնդրի վերաբերյալ՝ այս գրքի երկրորդ մասում խմբագիրները գետեղել են արդեն դասական արժեք ստացած նախորդ երկու դարերում արված ուսումնասիրությունները: Իրանք, կրելով ժամանակի կնիքը, այնուամենայնիվ, ըստ հարկի

լուսարանում են հայագիտության բոլոր նվաճումները հայոց նախնիների թեմայի վերաբերյալ:


Գրքի առաջին մասում գետեղված են նշված գիտաժողովի ղեկուցումների ամբողջացված տեքստերը: Սրանք, ներկայացված լինելով շատ տարբեր ուղղութիւնների և հետաքրքրութիւնների տեր գիտնականների կողմից, Հայկազունիներին անդրադարձել են ժամանակակից հումանիտար գիտութիւնների գինանոցի գրեթէ բոլոր հնարավոր մեթոդներով՝ ներառելով այնպիսի գիտութիւններ, ինչպիսիք են՝ լեզվաբանութիւնը, գրականագիտութիւնը, համեմատական առասպելաբանութիւնը, պատմական աշխարհագրութիւնը, հնագիտութիւնը, աղբյուրագիտութիւնը, արևելագիտութիւնը, մարդաբանութիւնը:

Ընդգրկելով հայոց նախագրային շրջանի պատմութեան մի ընդարձակ փուլ՝ Հայկազունիները կարևոր բնագավառ են՝ բացահայտելու համար հայոց պատմութեան և մշակույթի ակունքները: Ապագան, որ կերտում է հայ ժողովուրդը անկախ պետականութեան շրջանակներում, պահանջում է նորի հետ նաև նախնիներում մոռացված կամ կորստի մատնված տարբեր քաղաքական ու գաղափարական հաստատութիւնների ճանաչում և վերաիմաստավորում, որի վստահելի միջոցներից մեկը սեփական անցյալի քննական ուսումնասիրութիւնն է: Ուստի, ղիտարկվող հիմնախնդիրը իմացականից բացի ունի նաև գործնական նշանակութիւն:

Գրքում երբեմն բարձրացվել են հարցեր, առաջադրվել այնպիսի դրույթներ, որոնցից ոչ բոլորն են ընդունելի այս գրքի խմբագիրների կողմից: Ժողովածուն, անկասկած, հույժ արդյունավետ և անհրաժեշտ քայլ է հայոց և մերձավորարևելյան երկրների պատմութեանը հուզող և հայկազունների՝ միշտ հրատապ հիմնախնդրի բացահայտման ուղղութեամբ: Առավել հետաքրքիր է, որ ավանդական ուղղութիւններին նվիրված ղեկուցումների մեծ մասը, անկասկած, նոր խոսք է հայագիտության մեջ, իսկ ներկայացված ղեկուցումների մյուս խումբը նախնիներում նվազ շոշափված մեթոդներով ստացված լուսարանումներ են, որոնց կիզակետում հայ ժողովուրդն է, նրա կենսապահովման նյութական ու հոգևոր միջավայրը:

ԽՍԻԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԱՅԿՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (ԸՍՏ ՄՈՎԱՏԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ)



- | | | | |
|--|---|--|---|
| | Թեգարամա երկրի մտավոր տարածքը մ.թ.ա. XII դ. | | Հայ ժողովրդի կազմավորման մեջ ավելի ուշ շրջանում ներգրավված այլ տարածքներ |
| | Այրարատյան բազավորության սահմանները և տարածքը Արամայի զահակությունյան օրոք մ.թ.ա. XI դ. վերջին | | Հայկի կողմից առաջնորդվող թորգոյանների հաստատվելը Կիլիկիայում |
| | Այրարատյան բազավորության սահմանները և տարածքը Արամե-Արամի օրոք մ.թ.ա. 859-843 թթ. | | Թորգոյանների 300 անհնազանդ ընտանիքների շարքը դեպի Արարատի երկիր |
| | Այրարատյան բազավորության և Արմավիր մայրաքաղաքի հիմնադրումը Արամայի օրոք մ.թ.ա. 1032 թ. | | Հայկի առաջնորդությամբ թորգոյանների մուտքը Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններ և հաստատվելը Հարբոն |
| | Թրակա-փյոյուզական ցեղերի ներխուժումը Փոքր Ասիա թերակղզի և ինքական պետության կործանումը | | Աղի (Վանա լիճ) ծովափի ավազանի գրավումը Հայկի կողմից |
| | Թրակա-փյոյուզական որոշ ցեղերի շարժումը դեպի Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններ | | Թորգոյանների հաստատումը Այրարատյան դաշտում Արամայի օրոք |
| | Թրակա-փյոյուզական ցեղերի ճնշման ներքո թեգարամյանների (Թորգոյաններ) տարածումը դեպի Ալիխեն, Միսպիրիտիս, Կալարեն և Ալիարեն | | Այրարատյան բազավորության իշխանության հաստատումը Հայկական լեռնաշխարհի արևելյան և հյուսիսային շրջաններում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
 ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ
 ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՍ
 INTERNATIONAL CONFERENCE
 HAYKAZI'NS MYTH AND HISTORY



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԵՆՏՐՈՆԻ
 ԱՆՏԵՐՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
 ԿՈՆԳՐԵՍՍ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
 ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ
 ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՍ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԿԻՎԻ ԱՎՈՐՈՒՄ ԳԵՐԱԿԱՆ ԱՆՏԱԳՆՆԵՐ ԶԱՄԱՆՈՒ ՍՈՒՄ

միջազգային գիտաժողով
ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐ
 առաատիքի և դասնություն

6, 7/06/2012

Հայաստանի հանրապետության գիտությունների ազգային
 ակադեմիան և ԿԸ 2012 թ. հունիսի 5-6-ը նախատեսում է
 միջազգային գիտաժողով «Հայկազունիներ, առաատիքի և
 դասնություն» բնույթով, որը տեղի կունենա Երևանում՝ ՀՀ ԳԱԱ
 կոմպլեքսային կենտրոնի դահլիճում:
 Գիտաժողովը նվիրված է հայոց պատմությունը կրթությանը
 խոչի՝ Հայկազունիների, սրանց դերի, նախնություն
 նկատման հիմնախնդիրներին, Գիտաժողովի նպատակն է
 հայնագիտություն, սրբի հետազոտություն, կուսակցության,
 ազգակրթության, ինքնաբերական, արտաքինություն և
 հայնագիտություն այլ բնագիտությունում արձանագրված
 ներքինություններ, հատկապես ու օտար ազդեցությունից հիմնական
 նկատմանը անդրադարձնելը Հայաստանի հնագույն շրջանի
 պատմության և պատմագրության անհանրաժան, ճշտե
 առաատիքաբանության ու պատմագիտության շրջանակը
 և սահմանափակը, գրականությանը սերտապես հա
 յնագիտի ու հայոց պատմագիտությունների հարցազոտում
 արժեքազանցելը: Գիտաժողովը կընդգրկի Մուսակունյացի, որոնց
 մասին հարապիտություններ կապերով և հարապիտություն այլ
 բնագիտությունում առկա հիմնական տարակարծությունները:

Գիտաժողովը անց է կացվում Տեր-Եղիշ Լուկասի և Կ.Բոնին
 Մարդասիրտի մանկապարտեզում:



**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
 ՆՅՈՒԹԵՐ**

Օգտագործված գրականության ցանկ

Մովսես Խորենացի 1981, Հայոց պատմություն, Երևան:
 Աճառյան Հ. 1944, Հայոց անձնանունների բառարան, Հ. Բ, Երևան:
 Խաչատրյան Վ.Ն. 1998, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան:
 Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա. Հ. 1, Երևան, 1981:
 Հայ ժողովրդի պատմություն. Հ. 1, Երևան, 1971:
 Չաճջյան Մ. 1984, Հայոց պատմություն, Հ. 3, Երևան:
 Քոսյան Ա.Վ. 2004, Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան.
 Авдиев В. 1970, История древнего востока, Москва.
 Дьяконов И. 1968, Предыстория армянского народа, Ереван.
 Дьяконов И. 1983, К происхождению армянского народа, ՊԲՀ, 4, 149-178.
 Breasted J. 1927, Ancient Records of Egypt, Chicago.

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ Ք.Ա. VI-IV ԴԱՐԵՐՈՒՄ
ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ¹

Հայագիտության մեջ վերջերս առաջ քաշվեց մի տեսակետ, համաձայն որի Հայաստանը բաժանված չի եղել XIII և XVIII սատրապությունների, և որ վերջինս տարածվել է Կուր գետի և Կովկասյան լեռների միջև²: Իր ընդարձակ տարածքով XIII սատրապությունն Աքեմենյան Պարսկաստանի խոշոր և հարուստ նահանգներից էր, որի կրկհարյուրամյա գոյությունը կարևոր նշանակություն ունեցավ Հայ ժողովրդի կազմավորման գործընթացում: Հետևաբար, այն տեսակետը, թե մակեդոնական-սելևկյան ժամանակաշրջանում անգամ այսրեփրատյան Արմենիան ընդգրկել է միայն Մոփքը, Աղձնիքը, Տուրուբերանը, Վանա լճի ավազանը և Այրարատի մի մասը³, միանգամայն սխալ է և անընդունելի, քանի որ, դատելով աղբյուրներից, Աքեմենյաններից առաջ Հայաստանն իր տարածքով արդեն դուրս էր եկել Հայկական լեռնաշխարհի սահմաններից: Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Հայաստանի և Այսրկովկասի վարչական բաժանման մասին հունա-հռոմեական և սեպագիր աղբյուրների տեղեկությունները քննել ենք առանձին ուսումնասիրություններում: Սույն հոդվածում, այլևս չանդրադառնալով այդ աղբյուրներին, տեսնենք, թե որքանով են այդ տեղեկությունները համապատասխանում Խորենացու հաղորդումներին:

Դատելով Խորենացու տեղեկություններից՝ Աքեմենյան տիրապետության նախօրերին Հայկական պետության ձևավորումը նախընթաց դարաշրջանում արդեն ավարտված էր, և Հայկազյան Տիգրանի ժամանակ Հայկական պետությունն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի գրեթե ամբողջ տարածքը: Հայկական պետության և Հայ ժողովրդի կազմավորումը Խորենացու մոտ ներկայանում է Հայկյանների «հերոսական դարաշրջանի»⁴ պատմության շարադրամբ: Հենց Հայկյանների՝ Հայկական լեռնաշխարհում տարածվելու պատմությունն է⁵, որ Խորենացու մոտ հանդես է գալիս որպես Հայկական էթնոսի համախմբման և կենտրոնացման դարաշրջան: Եվ պատահական չէ, որ Պատմահայրը, Հայաստանի աշխարհագրական անվանումները կապելով Հայ ժողովրդի այս կամ այն նախնու հետ, միաժամանակ բացահայտում է պատմական անցյալի շերտեր, որոնք հնարավորություն են տալիս կատարելու պատմական և պատմաաշխարհագրական բնույթի որոշակի եզրակացություններ: Օրինակ, բացի Խորենացուց, Հայկական պետության գոյության մասին վկայում է նաև հույն պատմիչ Քսենոփոնը⁶, որի տեղեկությունները Հայաստանի մասին ունեն բացառիկ արժեք, քանի որ գորավար-պատմիչն անձամբ էր եղել Հայաստանում: Հայաստանի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Հերոդոտոսը, համաձայն որի «Պակտյուրիկից, արմեններից և հարևաններից մինչև Եփեսոսյանը ստացվում էր չորս հարյուր տաղանդ. սա տասներեքերորդ նահանգն էր»⁷: XIII սատրապությունն ուներ մեծ տարածք և որոշ չափով դուրս էր գալիս Հայկական լեռնաշխարհի սահմաններից⁸, և ինչպես կտեսնենք ստորև, այդպիսի վարչական միավորի ձևավորումը ոչ միայն Աքեմենյան արքունիքի քաղաքականության հետևանքն էր, այլև պայմանավորված էր Աքեմենյան տիրապետությանը նախորդած ժամանակաշրջանի Հայաստանի պատմաքաղաքական իրողություններով:

¹ Հոդվածը տպագրվել է «Վէմ» ամսագրում (2011 թ., 2, էջ 154-163):
² Հարությունյան, 1999. էջ 45-114: Խորիկյան 2007:
³ Մանանդյան, 1977. էջ 107-108: Հյուբշման 1907. էջ 16: Marquart 1901, S. 108. Hewsen 1983: p. 123-143; Hovhannisian 1997: p. 39 և այլն:
⁴ Քոսյան, 1999. էջ 256:
⁵ Հայկյանների տարածումը Հայկական լեռնաշխարհում բազմիցս է ուսումնասիրվել մասնագիտական գրականության մեջ (տե՛ս, օրինակ, Սարգսյան, 2006, էջ 46-72: Հմմտ. Քոսյան, 2005, էջ 146-150), սակայն այս ուղղությամբ կատարվող հետազոտությունները պահանջում են շարունակական զարգացումներ:
⁶ Xenophon, Cyropaedia.
⁷ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, III, 93: Herodotus, v. II-III, III, 93, p. 121.
⁸ XIII սատրապության սահմանների մասին տե՛ս Խորիկյան, 2007, էջ 68-69: Նույնի՝ 2005, էջ 173-192:

Այժմ տեսնենք, թե ինչ սահմաններ ունեն Հայաստանը Ք.ա. VI-IV դարերում: Բնականաբար, քննությունը պետք է սկսենք Հայկյան Հայաստանի սահմանների հստակեցումից: Հայկը, ապստամբելով Բելի դեմ, հեռանում է Հյուսիսային կողմերում գտնվող Արարադի երկիրը «Հանդերձ որդուվք իւրովք և դատերօք և որդուց որդուվք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեքհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ ի լեւնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ չինէ անդ տուն բնակութեան կայուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ»⁹:

Արարադի երկիրը տեղադրվում է Կորդվաց աշխարհում¹⁰, իսկ դաշտավայր տեղում հաստատվելը ըստ հույների վերաբերում է հետագայի Կորդվաց թագավորության արևմտյան մասին, ուրեմն Կադմուսի տուն անվան տակ՝ ասուրական աղբյուրների Կադմուսի երկիրը¹¹, պետք է հասկանանք ավելի մեծ տարածք, որը տարածվում էր նաև Տիգրիսի աջափնյակում: Թողնելով Կադմուսին՝ Հայկը բնակություն է հաստատում մի վայրում, որն անվանում է Հարք «այս ինքն թէ Հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ»¹²:

Հայկի Հարքում հայտնվելը նշանակում է, որ Կադմուսի տան և Հարքի միջև ընկած տարածքը Խորենացու կամ նրա աղբյուրի (Մար Աբաս, գուսանական երգեր) համար Հայաստան է, և Հարքի առանձնացումը նշանակում է, որ Հարք տեղանունը այս, ինչպես և մյուս դեպքերում, հնարավորություն է տվել Պատմահորը դիմելու տեղանունների բացատրության ժողովրդական կամ կեղծ ստուգաբանական սկզբունքին: Վերջին տեղեկության մեջ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Խորենացու այն բացատրությանը, թե Հարք նշանակում է, որ այստեղ բնակվողները Հայրեր են Թորգոմի տան սերնդի: «Տուն Թորգոմայ» երկիրը (եբրայերեն՝ Բեթ Թոգարմա) ուսումնասիրողները նույնացրել են խեթական աղբյուրների Թեգարամայի, ասուրական աղբյուրների Թիլգարիմուլի հետ և տեղադրել ներկայիս Մալաթիայից հյուսիս կամ էլ նույնացրել արևելափոքրասիական Մելիդ-Թարալի պետության հետ, որը հանդիսացել է թարալյան Ատունայի անմիջական ժառանգորդը¹³:

Պատմագիտական գրականության մեջ ուշադրություն է դարձվել այն իրողությանը, որ Հայկյանների կողմից Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասի իրացման և բնակեցման մասին Պատմահայրը քար լուծվում է պահպանում, և Պատմահոր՝ Հայկյանների մասին տեղեկությունների վերլուծությունը որոշ ուսումնասիրողների բերել է այն եզրակացության, որ Հայկ նահապետի մեկնակետը ոչ թե Միջագետքից է եղել, այլ «Տուն Թորգոմայ» երկրից¹⁴: Եթե նկատի ունենանք, որ Պատմահայրը Հարքի մասին խոսելիս ավելացնում է, որ Հարքում բնակվողները Հայրեր են Թորգոմի տան սերնդի, ապա պատմիչը, իր բացատրությանը Հայկին և նրա զավակներին ծագումնաբանորեն կապելով Թորգոմի տան հետ, դրանով իսկ անուղղակիորեն Հայկի և նրա ընտանիքի երթուղու մեկնակետը սկսում է Հայկի «նախնական Հայրենիքից»՝ «Տուն Թորգոմայ» երկրից:

Հայկյանների մասին Խորենացու հաջորդ տեղեկությունը ևս ունի հետաքրքիր բացատրություն: Խորենացին գրում է, որ Տիտանյան Բելը զորքով հասնում է Արարադի երկիրը, Կադմուսի տան մոտ¹⁵: Հեղինակը Արարադի երկիրը առանձնացնում է Կադմուսի տնից, այսինքն՝ Արարադի երկիրը դեռևս չէր մտնում Հայկյանների տիրույթների մեջ, և այս առումով հետաքրքիր է Սեբեոսյան տարբերակում պահպանված այն տեղեկությունը, թե Հայկը իր մահվանից առաջ «Արարադի երկիրը» նվիրում է իր

⁹ Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 33:
¹⁰ «Արարադայ՝ ի սահմանս Այրարատեան տէրութեան՝ ի գաւառն Կորդուաց» (տե՛ս «Փաստասի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց», էջ 36): Նաև Թովմայի այն տեղեկությունը, որ Նոյի տապանը «Հանգեալ ի լերինս Կորդուաց» (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 32):
¹¹ Арутюнян 1985: с. 98-99.
¹² Խորենացի, էջ 33:
¹³ Քոսյան, 1999, էջ 256: Նույնի՝ 1998, էջ 18-32: Բ. Հարությունյանը կարծում է, որ տարածքային առումով Թեգարամա և Թորգոմա տուն երկրները չեն նույնանում, քանի որ Թեգարամա կամ Թորգոմա տունը նույնանում է Հայոց թագավորությանը, իսկ Հայկյաններին էլ համեմատում է Հունական ավանդության Արմենոսականների հետ (տե՛ս Հարությունյան, 2005, էջ 128-145):
¹⁴ Մարգարյան, 2006, էջ 46-72: Հմմտ. Քոսյան, 1999, էջ 256-257: Նույնի՝ 1998, էջ 46-65:
¹⁵ Խորենացի, էջ 34:

թոռ Կադմուսին¹⁶, այսինքն՝ Հայկյանների տիրույթների մեջ էր նաև Կորդուք գավառը: Կադմուսի տիրույթների ընդարձակման մասին հավանաբար վկայում է նաև Խորենացու այն հաղորդումը, որ Հայկը իր մահվանից առաջ իր թոռ Կադմուսին հրամայում է բնակություն հաստատել իր առաջին տանը¹⁷: Փաստորեն երկրորդ անգամ Կադմուսի՝ իր երկրում բնակություն հաստատելը խոսում է այն մասին, որ Կադմուսի տունը՝ երկիրը, տարածվում էր Տիգրիսի աջ և ձախ ափերին:

Խորենացու հետագա շարադրանքից պարզվում է, որ Արամանյակը իր եղբայրներ Խոռին, Մանավաղին և վերջինիս որդի Բագին թողնում է Հարքում, որոնցից էլ առաջանում են Խոռխոռունիների, Բգնունիների, Մանավաղյանների նախարարությունները¹⁸: Այս տեղեկությունը նշանակում է, որ Հարքը սկզբնապես ունեցել է ընդարձակ տարածք, որը հետագայում բաժանվել է նախարարական առանձին տիրույթների, հետևաբար Ն. Աղոնցը ճիշտ է նկատել, երբ Հարքին սահմանակից Ապահուհիք, Խորխոռունիք, Բգնունիք գավառները համարել է Հարքի մեջ մտած շրջաններ¹⁹: Ապահուհյաց նախարարության՝ Հարքի մեջ նախապես մտած լինելու մասին հաստատում է հենց Խորենացին, երբ գրում է, որ այդ նախարարությունը, ինչպես և Մանավաղյանը և Բգնունականը, սերում էր Հայկի սերունդներից²⁰: Վանա լճի ավազանի իրացումը սկսվել էր Հայկի կողմից Հայք դաստակերտի հիմնադրմամբ, որի անունով էլ գավառը կոչվեց Հայոց ձոր²¹: Որդունիներին էլ կապելով Հայկյանների հետ՝ Խորենացին նրանց տեղադրում է Բասենի մեծ հովտում²²: Պատմահայրը գրում է նաև, որ Արամանյակը իր անունով անվանում է Արագած լեռը, իսկ բնակության վայրն էլ՝ ոտն Արագածո, այսինքն՝ Արագածոտն գավառը: Արամանյակի որդու՝ Արամայիսի անվան հետ Խորենացին կապում է Արամայիրը, Արամանյակի թոռի՝ Երաստի հետ՝ Երասիս գետի անունը, Արամանյակի որդու՝ Երասիսի հետ՝ Երասիս գավառանունը: Հաջորդ Հայկյաններին արդեն Խորենացին²³ հասցնում է Մասիս, Երասիսից հարավ, Մասյացոտն գավառը²⁴, Գեղարքունիք, նկատի ունենալով Գեղարքունյաց ծովի ավազանը, Գառնի և հետաքրքիր է, որ Սյունիքի իրացումը տեղի է ունեցել Գեղարքունիքից, ուրեմն կարելի է մտածել, որ Գեղարքունիքը հին ժամանակներում վարչական առումով չի մտել Սյունիքի մեջ²⁵, որի մեջ էր նաև, ըստ Պատմահոր, Գողթն գավառը²⁶: Չնայած Խորենացին Վարաժնունյաց տան առաջացումը կապում է ոչ ժամանակների հետ, սակայն սրանց ծագումնաբանական աղբյուր Գեղամի հետ²⁷ թույլ է տալիս ենթադրել, որ Հրազդան գետի ափերին գտնվող Վարաժնունիք գավառը ի սկզբանե Խորենացին համարել է Գեղամի տիրույթների մասը, որոնց մի հատվածը ուշ ժամանակներում հայտնի է դառնում Վարաժնունիք անունով: Ընդ որում, Գեղամի անունով կառուցված դաստակերտի վերանվանումը Գառնիկի անունով և վերջինիս սերունդներից մեկի՝ Վարաժի հետ Վարաժնունիք գավառի առաջացումը կապելը թույլ է տալիս ենթադրել, որ այս հաղորդումների մեջ արտացոլվել են Մեծ Հայքի աշխարհաբաժանման հերթական իրողությունները, այսինքն՝ Վարաժնունիք և Մազազ գավառներն ավելի ուշ արդեն աշխարհացոյցյան Այրարատ աշխարհի մեջ էին՝ բաժանվելով Գեղարքունի գավառից²⁸: Խորենացու վկայությամբ Վարաժնունիքի հարևանությամբ ապրում էին Գնթունի իշխանները,

¹⁶ Պատմութիւն Սեբեոսի, էջ 50:
¹⁷ Խորենացի, էջ 37:
¹⁸ Խորենացի, էջ 38:
¹⁹ Աղոնց, 1987, էջ 346:
²⁰ Խորենացի, էջ 115-116:
²¹ Խորենացի, էջ 37:
²² Խորենացի, էջ 114:
²³ Խորենացի, էջ 39-41:
²⁴ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն Հայոց, էջ 18:
²⁵ Ուշ ժամանակների մասին խոսելիս Խորենացին Գեղարքունիքը համարում է արդեն Սյունիքի գավառը. «Ի Գեղարքունի, ի գաւառին Սիւնեաց» (տե՛ս Խորենացի, էջ 120):
²⁶ «Իսկ գժրչտունիս և գժողթնցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարև հատուած» (տե՛ս Խորենացի, էջ 117):
²⁷ Խորենացի, էջ 39-42, 121:
²⁸ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում Սյունիքի գավառների թվարկման մեջ Գեղարքունիք մասին գրված է. «Գժեղարքունի՝ Հոմանուն ծովովն» (Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց, էջ 33):

որոնք սերում էին քանանացիներից²⁹։ Գնթունի նախարարների տոհմական կալվածքը համարվում է Ապարանը՝ Ննուա Նիզը³⁰, որը որպես գավառ ընդգրկում էր մեծ տարածք՝ արևելքում հասնելով Գեղարքունյաց ծով, ներառելով Վարաժնունիքը («և ծովեզերեայսն մանկունս, որք ի Գեղամայ և ի Քանանացոց»)՝³¹։ Անկախ վարչաքաղաքական փոփոխություններից՝ նշված գավառները և իշխանական տիրույթները մինչև Աքեմենյան պետության առաջացումը Հայաստանի անբաժանելի մասն էին։

Պատմահայրը «Հայոց պատմության» հաջորդ հատվածներում ևս Վաղարշակի գործունեության կապակցությամբ ներկայացնում է Հայկյանների կողմից Հայկական լեռնաշխարհի Հյուսիսային և արևելյան մասերի իրացումը։ Այսպես, Միսակից սերված Առանի մեծ ցեղը հաստատվում է Կուր և Երասխ գետերի միջև ընկած տարածքում՝ Աղվանքում³², այսինքն՝ Մեծ Հայքի հետագա Ուտիք և Արցախ նահանգների տարածքը։ Շարայի գավառներից Գուշարի տիրույթները ընդգրկում են հետագա աշխարհացույցյան Գուգարք աշխարհի արևելյան հատվածը, իսկ Գուշարի գավառներն էլ ժառանգում են Աշոցքը և Տաշրաց սեպհականությունը։ Հայկի թոռ Պասքամից սերված Տորքի տիրույթն էլ՝ Անգեղտունը³³, որը որպես կուսակալություն, անշուշտ, ուներ ավելի մեծ տարածք, ընդգրկում էր մինչև Եփրատ գետն ընկած տարածքները³⁴։

Հայաստանի տարածքի մասին կարևոր տեղեկություններ կան Խորենացու՝ Վաղարշակի գործունեության մասին պատմող հետևյալ տեղեկություններում։ Պատմահայրը գրում է, որ Վաղարշակը, կարգավորելով Մաժաքի կողմերը, պոնտացիներին և եգերացիներին, Պարխար լեռների ստորոտով, Տայքի միջով դառնում է դեպի Հյուսիս³⁵։ Այսպիսի աշխարհագրական լայն գործունեությունը, անշուշտ, չի կարող վերագրվել Վաղարշակ թագավորի հետ ավանդաբար նույնացվող Տրդատ Ա-ին կամ Վաղարշ Բ-ին, հետևաբար պետք է մտածել, որ Խորենացու տեղեկությունը կապված է հին ժամանակների հետ։ Այսպես, հիշատակվում են եգերացիների մասին, որոնց, իհարկե, պետք է փնտրել Տայքից Հյուսիս, թույլ է տալիս Վաղարշակի գործունեության մի հատվածը կապել Արտաշես Ա-ի հետ, որի ժամանակ Մեծ Հայքը ձորովի գետաբերանում փոքր հատվածով դուրս է գալիս Սև Սոփ³⁶։ Ինչ վերաբերում է Մաժաքին, ապա Հայաստանի սահմաններն այս ուղղությամբ մասամբ հասել են Արամ նահապետի, Տիգրան Երվանդյանի ժամանակ, իսկ Մաժաքը և պոնտացիները, այսինքն՝ Սև ծովի ափամերձ մի հատվածը, միասին Հայաստանի մեջ են եղել Աքեմենյան պետության ժամանակաշրջանում, երբ Հայաստանը մտավ XIII սատրապության մեջ³⁷։ Ուրեմն Խորենացու տվյալ տեղեկության մեջ կարևոր է արդեն այն իրողությունը, որ Վաղարշակի համար Տայքը իր բուն երկրի մի հատվածն է, որի մի գավառը՝ Կողը, հիշատակվում է պատմիչի կողմից։ Հայաստանի մեջ էր նաև Վանանդ վերանվանված Անիայտ կամ Վերին Բասեան գավառը³⁸։ Իսկ Տայքի և Բասեանի՝ Հայաստանի մեջ լինելու իրողությունը հաստատվում է նաև Քսենոփոնի տեղեկությամբ։ Այսպես, Հույները ապաստանում են, հավանաբար, աշխարհացույցյան Բագրևանդ գավառի գյուղերում, որտեղ էլ Խեյրիսոփոսի և Քսենոփոնի՝ թեև այդ ի՞նչ երկիր է հարցին, գեղջավազը պատասխանում է, թե Արմենիան

²⁹ Խորենացի, էջ 59, 106, 110:
³⁰ Աղոնց, 1987, էջ 336-337:
³¹ Հարությունյան, 2004, էջ 43:
³² «Ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ» (տե՛ս Խորենացի, էջ 113): Աղվանքի սահմանը «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ» նշում է նաև Կաղանկատվացի (տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 8): Նկատենք նաև, որ Մովսես Խորենացու հիշատակած Տուհաց գավառը կապվում է Ուտիքի Տուս-Քուստակ գավառի հետ (տե՛ս Մուրադյան, 2008, էջ 141-147):
³³ Խորենացի, էջ 113-114: Անգեղտան՝ Հայկի թոռ ոմն Պասքամից սերված լինելու մասին Խորենացիի հաղորդում է Առաջին գրքում (Խորենացի, էջ 71):
³⁴ Հարությունյան, 2001, էջ 157:
³⁵ Խորենացի, էջ 108:
³⁶ Հարությունյան, 1977, էջ 179: Խորեկյան, 2008, էջ 228: Նշենք նաև, որ Հայագիտության մեջ ուշադրության արժանի փաստարկներով Վաղարշակը համարվել է Հայաստանում Արշակունիների թագավորության հիմնադիրը, և նրա գործունեությունը կապվել է Ք.ա. II դարի երկրորդ կեսի հետ (տե՛ս, օրինակ, Շահինյան, 1993, էջ 12, 78 և այլն):
³⁷ Խորեկյան, 2005, էջ 173-192:
³⁸ Խորենացի, էջ 109:

է, և հարևան երկիրը խայտուբերի երկիրն է, և ցույց տալիս այնտեղ տանող ճանապարհը³⁹։ Պատմագիտության մեջ արդեն նշվել է, որ չնայած այն իրողությանը, որ Հույներն այնուհետև անցել են փասիանների և տաոխների երկրներով և մտել խայտուբերի երկիրը⁴⁰, այդուհանդերձ փասիանները և տաոխները, այսինքն՝ Բասեանի և Տայքի բնակչությունը, գյուղապետի համար սոսկ հայեր էին, և միայն խայտուբերն էին, որ համարվում էին այլազգիներ⁴¹։

Համաձայն Մովսես Խորենացու՝ Հարմայի որդի Արամի ժամանակ Հայաստանի սահմանները ընդարձակվում են։ Արամ նահապետը Նյուբար Մադեսին սպանելուց հետո նրա երկիրը մինչև Ջարասպ լեռը, իրեն ծառայեցնելով, հարկատու դարձրեց «մինչև ցթագաւորութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի և Նինուէի»⁴²։ Հարավային ուղղությամբ Հայաստանի տարածքային ընդարձակման մասին խոսում է նաև հետևյալ տեղեկությունը. «Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ճակատուն որ ընդ արևելեայս խաղայ նոյն գորութեամբ զկողմամբք Ասորեստանի. գտանէ և անդ գոմն ապականիչ երկրին իւրոյ, չորիւք բիւրովք վառելովք հետևակօք և հինգ հազար հեծելազօրու, Բարչամ անուն, յազգէ սկայիցն. որոյ սաստկագոյնս նեղեայ հարկաց խստութեամբ՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր։ Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեայ Արամ, հարձական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի արկանէ, զբազումս ի նոցանէ սատակելով. իսկ Բարչամ առաջի գինակրաց նորա պատահեալ՝ մեռանի...»⁴³։ Տեղեկությունից երևում է, որ Կորդուքը Հայաստանի մեջ է եղել, քանի որ Արամը շարժվում է դեպի Ասորեստանի դաշտը Կորդուքի միջով։ Միաժամանակ, քանի որ Արամը Ասորեստանի կողմերը հանձնում է Կադմոսի տան հաջորդներին, նշանակում է, որ Հայաստանի քաղաքական տիրապետության սահմանների մեջ են ներառվում նաև Ասորեստանի կամ Միջագետքի Հյուսիսարևմտյան կողմերը⁴⁴, որտեղ, դատելով աղբյուրներից, հայկական էթնիկական տարրը զգալի է եղել։

Խորենացու հաջորդ տեղեկության մեջ Արամի գործունեությունը կապվում է Կապադովկիայի արևելյան սահմանների հետ, որտեղ Արամը թողնում է Մշակ անունով մեկին իր ցեղից և տեղի բնակիչներին հրամայում է սովորել և խոսել հայերեն, իսկ ինքը վերադառնում է Հայաստան։ Մշակն էլ իր անունով կառուցում է մի դաստակերտ, որ կոչվեց Մաժաք, որը ավելի ուշ հայտնի էր Կեսարիա անունով, և երկրամասն էլ Հույները անվանեցին Պոտոին Արմենիան, որ թարգմանվում է Առաջին Հայք⁴⁵։ Կապադովկիայի արևելյան շրջանները նույնանում են Հերոդոտոսի Պակտյուիկե երկրին⁴⁶, ուրեմն Խորենացու տեղեկությունները հաստատվում են նաև օտար պատմիչի տեղեկությունների լույսով։ Համաձայն Խորենացու, հայոց Արամ նահապետն իր արշավանքները արևմտյան, հարավային և հարավարևելյան ուղղություններով սկսում է Արմավիրից⁴⁷, ինչը ցույց է տալիս, որ Հայաստանը մինչև Աքեմենյան տիրապետության հաստատումը արմատապես իր մեջ ներառել է նաև Հայկական լեռնաշխարհի Հյուսիսային և Հյուսիսարևելյան եզերական շրջանները, քանի որ Հյուսիսային և Հյուսիսարևելյան ուղղություններով ոչ մի արշավանքի մասին Պատմահայրը չի նշում։ Ընդ որում, նկատի ունենանք, որ Արամի արշավանքներն էլ ուղղված էին Հայաստանից դուրս՝ հարևան շրջանների վրա։

³⁹ Քսենոփոն, Անաբասիս, էջ 98: Xenophon, Anabasis, p. 56-57.
⁴⁰ Խայտուբերի երկրի մասին տե՛ս Խորեկյան, 2006, էջ 114-126:
⁴¹ Հարությունյան, 2001, էջ 96:
⁴² Խորենացի, էջ 44: Այս տեղեկության առաջին հատվածը վերաբերում է Ք.ա. VII դարի 50-40-ական թվականներին, իսկ Նինոսի մասին հիշատակությունը՝ Ք.ա. IX դարի իրողություններին (տե՛ս Հարությունյան, 1998, էջ 25-26):
⁴³ Խորենացի, էջ 45:
⁴⁴ Արծրունյաց տան պատմիչը նույնպես գրում է, որ Տիգրան Երվանդյանի ժամանակ Հայաստանի հարավային սահմանը ընդարձակվել էր (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 66): Բեհիստունի արձանագրությունում հայ ապստամբները պարսիկների դեմ ճակատամարտերից մեկը տալիս են Ասորեստանի Իզալա վայրում (տե՛ս Kent 1953: p. 124): Արձանագրության աքքադերեն տարբերակի տվյալներով Իզալան հիշատակվում է Ուրաշուուի (իմա՝ Հայաստանի) կազմում՝ առանց Ասորեստանի հետ կապելու (տե՛ս Malbran-Labat 1994: p. 98, 114): Սա նշանակում է, որ Իզալան Հայաստանի վայրերից մեկն էր, և ապստամբները կռվել են հենց Հայաստանի սահմաններում:
⁴⁵ Խորենացի, էջ 46-47:
⁴⁶ Հարությունյան, 1998, էջ 78-79: Խորեկյան, 2005, էջ 173-181:
⁴⁷ Խորենացի, էջ 44:

Հայաստանի տարածքի մասին խորհրդանշանաբանական տեղեկություններ է տալիս նաև Սկայորդու ժամանակաշրջանի կապակցությամբ՝ գրելով, թե Ասորեստանի Սենեքերիմ (Մինսխերիբ) թագավորի որդիներից Սանասարին Սկայորդին բնակեցնում է Ասորեստանի սահմանների մոտ, որի ժառանգները, ըստ էության, ուշ ժամանակներում ստանում են Աղձնյաց լեռնաշղթան: Մյուս որդին՝ Արգամոզանը (Աղրամեյեթ), բնակվում է նույն կողմի արևելյան հարավում, որից սերում են Արծրունիները և Գնունիները⁴⁸: Մեր կարծիքով, Արգամոզանը բնակություն է հաստատում Մոկքում, որի տարածքը, հավանաբար, սկզբնապես մտել է Աղձնիքի մեջ, և Մոկքի՝ որպես աշխարհի և նախարարության առաջացումն ավելի ուշ է տեղի ունեցել⁴⁹: Գնունիների և Արծրունիների մասին հիշատակությունն էլ ցույց է տալիս, որ նախքան այդ նախարարությունների առաջացումը, դրանց տարածքը Հայաստանի մեջ էր:

Հայաստանի արևելյան և հարավարևելյան սահմանների մասին խորհրդանշանաբանական տեղեկությունները կարելի է համեմատել Թովմա Արծրունու հաղորդումների հետ: Խորհրդանշանաբանական և Արծրունյաց տան պատմիչի հաղորդումներից պարզվում է, որ Տիգրան Երվանդյանին էին ենթարկվում կապաղովկիացիները⁵⁰, այն է՝ Պակոյուհիկե երկիրը: Մովսես Խորենացու հաղորդմամբ Ք.ա. III դարի վերջերին նույնպես Ուտիքը Հայաստանի կազմում էր. «Լուր հասան է առ Երուսաղեմ յՈւտեացուց գաւառին, եթէ գումարեաց արքայն Պարսից զօրս բազումս ի ձեռն Սմբատայ, զի ի վերայ քո խաղաղեալ ածցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր»⁵¹: Ըստ Խորենացու՝ «Իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ ածապարէր հասանել ի սահմանս Ուտեացուց: Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նա և նախարարքն զորս եթող Երուսաղեմ»⁵²: Պետք է նշել, որ Խորենացու այս տեղեկությունները, որոնք ծագում են Ողյուճկ քրմից (II դար), պատմականորեն հավաստի են և համընկնում են Ստրաբոնի տեղեկությունների հետ⁵³: Սեպագիր արձանագրությունների տեղեկությունները ևս հստակորեն ցույց են տալիս Հայկական ցեղերի գոյությունը Ուտիքի և Արցախի տարածքում առնվազն Ք.ա. VIII դարից⁵⁴: Տիգրան Երվանդյանի հետ է կապվում Ուտիքի Տիգրանակերտ ավանը, որը գտնվել է Սեբեոսի հիշատակած Տիգրանակերտ ավանի (Հայերը ավերակներն անվանել են Թնգրնակերտ, իսկ եկվոր մահմեդականները՝ Թառնագյուղ) մոտ՝ Ես-բուլաղ կամ Արքայի աղբյուր (Արքայակն աղբյուր) վայրում⁵⁵: Թովմա Արծրունին հաղորդում է, որ Մեծն Տիգրան Հայկազնը Մարաստանի Աժդահակ թագավորի դեմ ճակատամարտ տալու համար զորք է ժողովում «եւ վազս առեալ փութացան մտին ընդ կողմն Մականայ, բանակեցան ի դաշտավայրին Մեղիացուց»⁵⁶:

Արծրունյաց տան պատմիչը, որն օգտվել է մեզ անհայտ ինչ-ինչ աղբյուրներից, Արաքսը համարում է Հայաստանի և Մարաստանի սահմանը և Մուղանի դաշտը (համտ. Խորենացու մոտ

⁴⁸ Խորենացի, էջ 70-71: Թովմա Արծրունին Արծրունիներին կապում է մարաց Աժդահակ թագավորի զավակների հետ և սրանց նախարարության առաջացումն էլ կապում Տիգրան Երվանդյանի ժամանակաշրջանի հետ՝ նրանց բնակության վայրեր նշելով Աղբակը, Ջողախե-Ջուղան, Վրնջունիսը և Հախրամ-Խրամը՝ Նախճավանի զավառում (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 64): Ըստ Խորենացու՝ Տիգրան Երվանդյանը մարաց գերիներին «բնակեցուցանէ յարևելեայ ուսոյ մեծի լեռինն մինչև ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Դաժդոյնք, և որ այլք առ եզերք գետոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև Հանդէպ ամրոցին Նախճաւանու. և զերիս աւանսն, զԽրամ և զՋուղայ և զԽորշակունիս իսկ ի միւս կողմանէ գետոյն. զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդահական, մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանու» (տե՛ս Խորենացի, էջ 83):

⁴⁹ «Իսկ զմովկացին ի նոյն գաւառէ գտեալ (Հայոց Վաղարշակ թագավորը - Խ.Հ.) այր, որ ունէր ընդ իւրեաւ սրիկայս բազումս՝ նախարարութիւն հաստատէ» (տե՛ս Խորենացի, էջ 116):

⁵⁰ Խորենացի, էջ 81:

⁵¹ Նույն տեղում, էջ 169:

⁵² Նույն տեղում, էջ 170:

⁵³ Տիրացյան, 1962, էջ 7-24:

⁵⁴ Կարապետյան, 1998, էջ 133-134, 234-235 և այլն: Տե՛ս նաև Հարությունյան, 1994, էջ 257-259: Այն հանգամանքը, որ Ստրաբոնը չի նշում աղվաններից երկրամասեր գրավելու մասին, ցույց է տալիս, որ Հայ էթնոսի համար Կուր գետը եղել է էթնիկական և քաղաքական սահման, այսինքն՝ Կուրի և Երասխի միջագետքը ունեցել է Հայկական բնակչություն: Նշանք նաև, որ Սակասեն-Շակաշենը, որտեղ Ք.ա. VII դարում հաստատվել էին սակ-սկյուրները, և Արաքսենի դաշտը Ստրաբոնը համարում է Հայկական տարածքներ (տե՛ս The Geography of Strabo, II, I, 14; XI, VII, 2; XI, VIII, 4; XI, 14, 4-5):

⁵⁵ Հարությունյան, 1998, էջ 10-11:

⁵⁶ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 62:

Մեղացոց կողմերը) մտցնում Մարաստանի մեջ: Թովմայի մի կարևոր վկայությունից պարզվում է, որ Երվանդ Վերջին արքայի օրոք Մեծ Հայքի թագավորության սահմանը Պարսկահայքի շրջանում անցել է Անձախիձոր գավառի արևելակողմով⁵⁷, այսինքն՝ Հեր և Զարևանդ գավառները դեռևս Հայոց պետության մեջ չէին մտնում⁵⁸: Թովման նշում է նաև, որ Զարավանդը Ատրպատականի գավառն էր⁵⁹: Մեր կարծիքով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Թովման նշված տարածքները համարում է Ատրպատականի և ոչ թե Մարաստանի մաս: Բնականաբար, տարբերությունն ակներև է: Պարզապես Ատրպատականը, որը հզորացել էր Ք.ա. IV դարի վերջին տասնամյակներին, կարողացել էր նվաճել Ուրմիո լճի ավազանը, այդ թվում և Հետագա Պարսկահայք աշխարհի ամրոցը տարածքը: Սատրապական Հայաստանի հարավային սահմանն անցել է Ուրմիո լիճը թափվող Արասի գետով: Հայաստանի և X սատրապության սահմանը տարածվել է, ամենայն հավանականությամբ, Ուրմիո լիճը թափվող Սաղամաս գետից Հյուսիս մինչև Կարմիր կամ Կոտոր գետի հոսանքը, վերջինիս Արաքսի հետ միախառնվելու հատվածը: Որ Կարմիր գետը սահման էր X սատրապության և Սատրապական Հայաստանի միջև, կարելի է հիմնավորել նաև Հետևյալ տեղեկություններով: Մովսես Խորենացու տեղեկությունից պարզվում է, որ Վաղարշակ արքան «ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ իսղել. և նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչև ցճոււաշ և ցՆախճաւան, և նահապետութեան ազգին սա մեծարոյ»⁶⁰: Քանի որ Արտաշես Ա-ի նվաճած Փափնիտիսը⁶¹ նույնանուն է Մարդպետականին⁶², ապա Պատմահոր այս կարևոր տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Կարմիր գետը և Երասխը հանդիսացել են սահմանային գետեր նախ X սատրապության, ապա Ատրպատականի և Հայաստանի միջև: Հետաքրքիր է նաև Թովմա Արծրունու տեղեկությունն այն մասին, որ Երվանդը «երթայ գետեղի ի Նախճաւանն աւանի յոստանին Վասպուրական աշխարհին»⁶³:

Վասպուրականի և վերջինիս մեջ Նախճավանի լինելու մասին Արծրունյաց տան պատմիչի տեղեկությունը վերաբերում է շատ ավելի ուշ ժամանակներին, իսկ Նախճավանը Երվանդ Վերջինի ժամանակ Հայաստանի մեջ էր և կարող էր նույնիսկ թագավորական ոստան լինել: Ըստ պատմիչի՝ Երվանդը Ատրպատականի սահմաններով է վերադառնում Անձահի ձոր և Հետո գնում Նախճավան⁶⁴: Պատմիչի այս տեղեկությունից երևում է, որ Հայաստանի մեջ մտնող Անձահի ձորը հանդիսացել է Ատրպատականին սահմանակցող գավառ, և Երվանդը Նախճավան գնալու համար պետք է անցներ Ճուաշ գավառով, որը մտնում էր Հայաստանի մեջ: Թովմա Արծրունու տեղեկություններից ևս կարելի է եզրակացնել, որ Կարմիր գետը սահմանային գետ էր ինչպես Հայաստանի և Ատրպատականի, այնպես էլ Աքեմենյան ժամանակաշրջանում XIII և X սատրապությունների համար:

Այսպիսով, ի մի բերելով կատարված քննության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ համաձայն Մովսես Խորենացու՝ մինչև Ք.ա. VI դարը Հայաստանն ուներ ընդարձակ տարածք և հիմնականում այդ տարածքով էլ, ըստ հին աղբյուրների, մտավ Աքեմենյան Պարսկաստանի XIII սատրապության կազմի մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ յակնուածովք նախնեաց, հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881:
 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյան, Երևան, 1985:
 Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986:

⁵⁷ Նույն տեղում, էջ 84:
⁵⁸ Հարությունյան, 1994, էջ 260:
⁵⁹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 82:
⁶⁰ Խորենացի, էջ 112:
⁶¹ The Geography of Strabo, XI, 14, 4-5.
⁶² Հարությունյան, 1994, էջ 259-265: Խորիկյան 2009, էջ 28-29:
⁶³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 84:
⁶⁴ Նույն տեղում, էջ 84:

Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ա. Թարուծիւնեանի, լրացումները Ա.Բ. Սարգսեանի, Երևան, 1990:

Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածութիւնը Վ. Առաքելյանի, Երևան, 1983:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Գ.Բ. Թոսունյանի, Երևան, 1996:

Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութիւն Գ. Արզարյանի, Երևան, 1979:

Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Բ. Պատկանյանի, Երևան, 1987:

Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970:

Herodotus (with an English translation by A. D. Godley), v. II-III, Cambridge, Mass.-London, 1957 (Loeb Classical Library).

The Geography of Strabo (with an English translation by H. L. Jones), In Eight Volumes. London, 1969.

Xenophon, Anabasis (with an English translation by Carleton L. Brownson), Books IV-VII, Cambridge, Mass.-London, 1947 (Loeb Classical Library).

Xenophon, Cyropaedia (with an English translation by Walter Miller), v. I-II, Cambridge, Mass.-London, 1960 (Loeb Classical Library).

Աղոնց Ն., 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան:

Խորիկյան Հ., 2005, Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում, ՊԲՀ, 3, էջ 173-192:

Խորիկյան Հ., 2006, Աբեմենյան Պարսկաստանի XIX սատրապութեան էթնիկական կազմի վերաբերյալ, Բանբեր Երևանի համալսարանի, 2, էջ 114-126:

Խորիկյան Հ., 2007, Հայաստանը և Այսրկովկասը Աբեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան:

Խորիկյան Հ., 2008, Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, ՊԲՀ, 2, էջ 222-231:

Խորիկյան Հ., 2009, Անտոնիոսի պարթևական արշավանքի հետ կապված մի հարցի շուրջ, ՄՄԱԵԺ, Հ. XXVII, 2009, էջ 28-35:

Կարապետյան Հ., 1998, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Երևան:

Հարությունյան Բ., 1994, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջ, ՊԲՀ, 1-2, էջ 256-266:

Հարությունյան Բ., 1998, Հայաստանի, Հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դդ.), Երևան:

Հարությունյան Բ., 1999, Աբեմենյան Պարսկաստանի XVIII սատրապութեան տեղադրության շուրջ, ՀԱ, 1-12, էջ 45-114:

Հարությունյան Բ., 2001, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան:

Հարությունյան Բ., 2004, Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Երևան:

Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, թիվ 2, էջ 176-198:

Հարությունյան Բ., 2005, Թողարմա երկիրը և Հայկյանները, «Աստվածաշնչական Հայաստան», էջ 128-145:

Հյուբեյան Հ., 1907, Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Հ. Պիլէգիկճեան, Վիեննա:

Մանանդյան Հ., 1977, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, Երկեր, Հ. Ա, Երևան:

Մուրադյան Պ., 2008, Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը, պրակ Ա, Երևան:

Շահինյան Լ., 1993, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան:

Սարգսյան Գ., 2006, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները, Պատմագիտական հետազոտություններ, 2006, էջ 46-72:

Տիրացյան Գ., 1962, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն.մ.թ. III-II-րդ դարերի պատմության մասին, Բանբեր Մատենադարանի, 6, էջ 7-24:

Քոսյան Ա., 1998, Տուն Թորգոմայ, Երևան:

Քոսյան Ա., 1999, Արամ Նահապետը Կապադովկիայում, ՊԲՀ, 1, էջ 237-259:

Քոսյան Ա., 2005, Աստվածաշունչը և Հայոց ազգածագման խնդիրը Խորենացու «Հայոց Պատմության» մեջ, «Աստվածաշնչական Հայաստան», էջ 146-150:

Арутюнян И.В. 1985, Топонимика Урарту, Ер.

Hewsen R. 1983, The boundaries of Achaemenid "Armina", "Revue des etudes Armeniennes", t. XVII, Paris, p. 123-143.

Kent R. 1953, Old Persian. Grammar. Texts. Lexicon, 2nd ed., New Haven.

Malbran-Labat F. 1994, La version akkadienne de l'inscription trilingue de Darius á Behistun, Roma.

Marquart J. 1901, Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin.

"The Armenian People from Ancient to Modern Times", vol. I, edited by R. G. Hovhannisian, University of California, Los Angeles, St. Martin's Press, New York, 1997.

H.Khorikyan

THE TERRITORY OF ANCIENT ARMENIA IN THE 6TH-4TH CENTURIES B. C. ACCORDING TO MOVSES KHORENATSI

Summary

Movses Khorenatsi's, "History of Armenia" contains information which reflects events and phenomena connected with Armenia in the 6th-4th centuries B.C. The comprehensive investigation of the "History of Armenia" provides the opportunity to make accurate historicalgeographical definitions, and clarify its scope. The information provided by Movses Khorenatsi about Hayk and the first Haykides shows that the Armenian Highland, long before the Achaemenides, was mainly inhabited by Armenian tribes. In the article, we conclude that according to Movses Khorenatsi, Armenia till the 6th century B.C. had a large territory and its main territory, according to ancient sources, entered into the structure of the 13h satrapy of Achaemenid Persia. Satrapic Armenia was one of the largest and richest parts of Achaemenid Persia in the 6th4th centiries B.C.